# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 56-61-85. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

10022282

№ 01/10.2/2552-11
«06» 05 2011 թ

Ձեր № 23.1-07/0393-11
2011-04-06

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջավադյան,

Քննության առնելով Ձեր 06.04.2011թ. 23.1-07/0393-11 գրությամբ ներկայացված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և 17 այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը՝ հայտնում եմ հետևյալը.

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

- Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետից հանել «այլ տեղեկատվությունները» բառերը: Խնդիրը կայանում է նրանում, որ օրենքով պետք է սպառիչ թվարկված լինեն պարտադիր ներկայացվող բոլոր տեղեկությունները,

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ՝

- Առաջարկվող նախագծում, ինչպես նաև գործող օրենսգրքում սանկցիաները պետք է շարադրվեն հստակ: Եթե սանկցիայով նախատեսված են տույժեր, ապա դրանք

նշանակվելիս կամ կիրառվելիս պետք է տարանջատվեն: Քանի որ նախագծում «և» կամ «կամ» բառերն օգտագործվում են միաժամանակ (և/կամ), դրանք տույժ նշանակող մարմնի կողմից կարող են թյուրիմացաբար այլ կերպ հասկացվել, որն էլ իր հերթին կարող է բացասաբար անդրադառնալ իրավահարաբերության մյուս սուբյեկտների վրա,

3. «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ՝

- նախագծով հստակ սահմանված չեն և հիմնավորման կարիք ունի վճարային գործիքների (օրինակ՝ պլաստիկ քարտ) հայտարարագրման ձևը, ինչպես նաև դրանց պատկանելիության և պարունակության ճշտման ընթացակարգը,
- նախագծի 3-րդ հոդվածով «ծագման» պահանջի սահմանումը հստակեցման կարիք ունի: Խնդիրը կայանում է նրանում, որ «ծագումը» կարող է մեկնաբանվել նաև որպես տեղեկատվություն «ծագման երկրի վերաբերյալ»,
- նախագծի 4-րդ հոդվածի «անսովոր տեղափոխումների» հասկացությունը հստակեցման և սահմանման կարիք ունի: Բացի այդ, հիմնավորման կարիք ունեն նույն հոդվածով սահմանված մաքսային մարմնի աշխատակիցների վրա դրվող պարտականությունները՝ ձեռքբերման աղբյուրը, արտահանման երկիրը և տեղափոխման նպատակը ներմուծված կամ արտահանված ապրանքների ծագման երկիրը պարզելու և համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խմբագրված նոր տարբերակը ՀՀ կառավարության կողմից արդեն իսկ նախնական հավանության է արժանացել և ներկայումս գտնվում է լրացուցիչ քննարկման փուլում, առաջարկում եմ ներկայացված նախագիծը հանել շրջանառությունից և Ձեր կողմից ներկայացված դրույթը ներառել խմբագրված նոր օրենքի նախագծում:

5. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծով ներկայացված առաջարկությունները, մասնավորապես նոր 15-րդ մասի լրացումը չի բխում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից: Ներկայացված

նախագիծը քննարկվող փաթեթով կարգավորվող հարաբերություններին չի առնչվում, ուստի նպատակահարմար եմ համարում նախագիծը հանել շրջանառությունից և անհրաժեշտության դեպքում այն քննարկել որպես առանձին առաջարկություն:

6. Միաժամանակ, կից ներկայացվում են իրավական ակտերի նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ 17 ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և 17 այլ օրենքներում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա զգալի ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և 17 այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) և 17 այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***բացասական*** ազդեցություն:

- Նախագծով սահմանավում է իրավաբանական անձի պետական գրանցումն իրականացնելու համար տեղեկության տրամադրելու լրացուցիչ պահանջ, ինչը արդյունքում կվատանա «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի «Ընկերության հիմնադրում» ցուցանիշը: Միաժամանակ հակասում է ՀՀ կառավարության որդեգրված գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությանը, մասնավորապես՝ «մեկ պատուհանի կանգառ»-ի սկզբունքով իրավաբանական անձանց գրանցման և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գործող ընթացակարգին:
- Հաշվետվություն տրամադրող անձանցից Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի լիազոր մարմնին այլ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ներկայացնելու պահանջի սահմանումը կավելացնի ընկերությունների համար վարչական բեռը, ներառյալ դրանց վրա կատարվող ծախսերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ